Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամեն. Տ. Գեվորգ արքեպիսկոպոսի Հայրենական պատերազմի առթիվ արտասահմանի հայությանն ուղղած կոչերին շարունակում է ջերմ հայրենասիրական ոգեշնչումով արձագանքել Սփյուռքի հայությունը։

Տ. Տեղակալի կոչերը առավելագույն հայրենասիրական էնտուզիազմ են առաջ բերել Իրանի մայրաքաղաքի՝ Թեհրանի հայությունն մեջ, որը իր սրտաբուղխ նվիրաբերությամբ օժանդակում է փառապանծ Կարմիր Բանակին ջախջախելու գերմանական ֆաշիզմը և ազատություն բերելու ֆաշիզմի լի տակ տնքացող ժողովուրդներին։

Ստորև զետեղում ենք Ամեն. Տ. Տեղակալի ստացած հեռագիրը Թեհրանի հայ հասարակությունից։

ԷՋՄԻԱԾԻՆ, ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՁԵՈՐԵՔՁՅԱՆԻՆ

Ձեր հայրենասիրական կոչով ոգեշնչված, Թեհրանի հավատացյալ հայերի զանազան խավերը հավաքել և ընթացիկ հաշիվ են մուծել հօգուտ «Մասունցի Դավիթ» տանկային շարասյան մեկ միլիոն վաթսունյոթ հազար հարյուր քառասուն հինգ ռիալ։

Ամբողջ հոգով ցանկանում ենք, որ մեր այս համեստ լուման օժանդակի հերոսական հայրենասիրական ընձեռումին։

«Մասունցի Դավիթ» տանկային շարասյան օգտին միջոցների գանձումը շարունակվում է։

Թեհրանի Նկեղեց. խորհրդի Նախագահ՝
Պրոֆեսոր Գ. ՀԱԿՈԲՅԱՆ